



**ՀԱՆԳԻՍ**  
**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՂԱՌԻՍՅԻ**  
**Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՌՔԻ**  
**(1901—1971)**

Բոլղար օրթոդոքս եկեղեցին ծանր կոտուած կրեց: Սույն թվականի մարտի 7-ին Սոֆիայում, 70 տարեկան հասակում, կարձասուն հիվանդությունից հետո, վախճանվեց Բուղարիայի օրթոդոքս եկեղեցու պետ և Սոֆիայի միտրոպոլիտ, Նորին Սրբություն Տ. Կիրիլ Պատրիարքը:

Հանգույցալ Տ. Կիրիլ Սրբազն Պատրիարքը ծնվել է 1901 թվականի հունվարի 16-ին: Նորին Սրբությունը իր համական կրթությունը ստացել է Սոֆիայի հոգևոր հեմարանում: Ապա մեծ հաջողությամբ ավարտել է Բելգրադի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետը: 1927 թվականին ստանում է աստվածաբանական դոկտորի գիտական աստիճան՝ Շենոգովիայի աստվածաբանական ֆակուլտետից:

Սյունիթետն իր աստվածաբանական և փիլիսոփայական գիտելիքները խորացնելու համար նա ստվորում է Ավաստիայի և Գերմանիայի համալսարաններում, մասնավորաբ խորանարդով փիլիսոփայության և եկեղեցու պատմության մեջ:

1923 թվականի դեկտեմբերին ձեռնադրք վում է կուսակրոն քահանաւ և ուսուցչական պաշտոնի հրավիրվում Սոֆիայի աստվածաբանական հեմարանում, միաժամանակ

վարում է Սոֆիայի միտրոպոլիտի փոխանորդի և ս. սինոդի գլուխվոր քարտողարի պաշտոնները:

1938 թվականին հշանակվում է Պլավիխի միտրոպոլիտ: 1950 թվականին ընտրվում է ս. սինոդի նախագահի տեղակալ: 1953 թվականին, բոլղարական պատրիարքության վերահստանումից հետո, երրորդ ազգային-եկեղեցական ժողովը Կիրիլ միտրոպոլիտին ընտրում է պատրիարք համայն հովարդիայի:

Հանգույցալ Պատրիարքը վարչական իր պատասխանատու գործունեության ընթացքում գրադրում է նաև մատենագիտությամբ: Նա համարվում է բոլղար ժողովրդի ազգային, երա վերածննդի և եկեղեցական ինքնավարության պայքարի պատմության քաշատելյակ մասնագետներից մեկը: Նրա պատմա-քանակիրական աշխատություններից մի քանիսը հրատարակվել են Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի կողմից: Հանգույցալը իսկական անդամ էր Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի:

Տ. Կիրիլի Սրբազն Պատրիարքը ջերմ նայրենասեր, եկեղեցիների միության և ժողովուրդների համագործակցության ու խա-



դասության պահպանման ջերմ կողմնակիցներից մեկն էր:

Հանգույցալ Սրբազն Պատրիարքը հայ ժողովրդի և եկեղեցու ամենաշատ և մեծագույն բարեկամներից մեկն էր:

Հանգույցալի մահը խոր վիշտ պատճառեց նաև Ամենայն Հայոց Հայրապետին, որի մեջ նա կապիւած էր մեծ և ամենաշատ բարեկամությամբ: Հայոց Հայրապետը Տ. Կիրիլ Պատրիարքի մահվան տխուր առիթով հայ եկեղեցու և անձամբ իր խորունկ վիշտն էր հայունուր բոլոր օրթոդոքս եկեղեցու սինոդին ողղաց իր հետագրով, որը տպվել է «Եջմիածին» ամսագրի սովուն համարում (էջ 5), որով հրահանգում էր Ռուսիանիայի և Բուլղարիայի հայոց թեսի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանին՝ անձամբ Աերկա լինելու թաղման արարողությանը և Աերկայացնելու իր ցավակցությունը բույր եկեղեցու հոգևորականությանը և ժողովրդին:

Վեհափառ Հայրապետի հրահանգի համաձայն տ. Տիրայր եպս. Մարտիկյանը Սովորում, բոյր եկեղեցիների այլ պատվիրակությունների հետ միասին, մասնակցում է Տ. Կիրիլ Պատրիարքի թաղման արարողության և, հանուն Հայոց Հայրապետի, խոսած իր դամբանականի մեջ բոլղար օր-

թողոքս եկեղեցու հոգևորականությանը Աերկայացնում Հայոց Հայրապետի վշտակցությունը:

Մարտի 14-ին ս. Եջմիածնի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հանդիսավոր հոգևորագիտաց Տ. Կիրիլ Պատրիարքի հիշատակին:

Նորին Սրբությունը իր դամբանականի մեջ Տ. Կիրիլ Պատրիարքին Աերկայացնում է որպես Բողոքարիայի օրթոդոքս եկեղեցու մեծագույն եկեղեցականներից մեկին, որպես գիտնականի, հայրենասերի, ժողովորդների միջև խաղաղության ջերմ պաշտպանի և հայ ժողովրդի ու եկեղեցու ազնիվ բարեկամի:

Հանգույցալ Սրբազն Պատրիարքի թաղման արարողությունը կատարվում է Սովիայի Մայր տաճարում, իսկ ազյունը տարվում է Պղուկիկ և ամփոփվում Պաշկովոյի վանքում:

Երկնային հանգիստ և խաղաղություն Տ. Կիրիլ Պատրիարքի բարի հոգուն:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր Անչեցին, զի գործ իրեանց չոգան զիետ նոցա» (Յայտ. ԺԴ 13):

